

## Սիրելի հայրենակիցներ,

«Լրատու»ի նախորդ թիւով յառաջաբանիս բովանդակութեան հիմնական նիւթը կազմած էր Մելգոնեան Կրթական Զաստատութեան վերջին իրադարձութիւններն ու անոր անորոշ ապագան: Յստակ մատնանշումներ կատարելով, կոչ ուղղած էի խնդրոյ առարկայ կողմերուն համագործակցիլ քանի տակաւին ուշ չէ: Այս հարցը համահայկական է եւ մեծ մասամբ լուծումը կը գտնուի Զ.Բ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան ձեռքը: Զակառակ այս իրողութեան, Սանուց գոյգ Միութիւններու տարած պայքարը Զայ Պետական Ներկայացուցիչին գործակցութեամբ կը շարունակուի տարբեր մակարդակներու վրայ: Նորութիւններ ունենալու պարագային՝ օրին պիտի տեղեկանաք մամուլի եւ «Լրատու»ի միջոցաւ:

Գաղութիս համար կայ նաեւ այլ դժբախտ իրականութիւն մը, որ ուղղակիօրէն կ'առնչուի մեր Պատմամշակութային Ժառանգութեան ու ազգային դիմագիծին հետ, որու ճակատագիրը սակայն կապուած է Կիպրոսի քաղաքական բարդ հիմնահարցի լուծման հետ: Խօսքս կը վերաբերի Մակարավանքի անմխիթար վիճակին ու մօտալուտ ապագային փլելու վտանգի ենթակայ իրողութեան:

Այս տարուայ Մայիս 10-ին կայացած Մակարավանք երկրորդ ուխտագնացութեան, անձնական փափաքով մեզի ընկերակցեցաւ Շուէտի դեսպան՝ Նորին Վսեմութիւն Ինկըմար Լինտաի: Ի տես վանքի կիսաքանդ վիճակը, թելադրեց այս կառոյցին հարցը Զայ Պետական Ներկայացուցիչին խողովակով, յանձնել Կիպրոսի հիմնահարցի երկխօսութեան առթիւ յառաջացած՝ Մշակութային Ժառանգութեանց Պահպանութեան Արիեստագիտական Յանձնաժողովի ուշադրութեան, որու հովանիին տակ պիտի ընդգրկուին Կիպրոսի բռնագրաւեալ տարածաշրջանին մէջ եղող պատմական արժէք ներկայացնող կառոյցները: Մայիսի վերջաւորութեան տեսակցու-

թիւն մը ունեցայ Յանձնաժողովի Յոյն Կիպրացի ատենապետ՝ Տակիս Զատճիտիմիթրիուի հետ, որուն փոխանցեցի Մակարավանքի ներկայ իրավիճակին լուսանկարներու մանրամասն թղթածրարը, շեշտելով մեր վանքին պատմամշակութային անփոխարինելի արժէքը թէ՛ Կիպրոսի եւ թէ Կիպրահայութեան համար: Յոյսով ենք, որ կողմերու բարի կամեցողութեամբ եւ գիտակցութեամբ, ինչպէս նաեւ մեր հետապնդումով, մօտ ապագային Մակարավանքը կը որդեգրուի վերոյիշեալ Յանձնաժողովին կողմէ եւ մեր վանքին հիմներն ու պատերը կը ստանան պէտք եղած խնամքը գոյատևելու դարե դար Զայ ժողովուրդին նման:

Ապրիլի սկիզբը Կիպրոս այցելեց «Յայաստան» Զամահայկական Զիմնադրամի գործադիր տնօրէն՝ Պրն. Արա Վարդանեան ընկերակցութեամբ՝ ԶԶ Յունաստանի եւ Կիպրոսի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Ն.Վ. Վահրամ Կաժոյեանի: Ինչպէս բոլորդ տեղեակ էք, այս այցելութեան նպատակն էր վերաշխուժացնել հիմնադրամի հանգանակութեան ընթացքը գաղութն ներս, Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչին եւ Ազգային Իշխանութեան հովանաւորութեամբ: Զաւաքը, տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ, ուր խօսք առաւ Պրն. Վարդանեան, որ շեշտեց հայկական գաղութներու նիւթական օժանդակութեան կարեւորութիւնը Զայրենիքի զարգացման ու վերելքի աշխատանքներուն մէջ: Իմ կարգիս, խօսք առնելով ընդօժեցի, թէ նմանօրինակ ծրագիրներու յաջողութիւնը կախեալ է սերտ ու անմիջական համագործակցութեան պարագայէն միայն, որ պէտք է գոյութիւն ունենայ Զայաստանի Դեսպանութեան եւ գաղութիս Ազգային Իշխանութեան ու Պետական Ներկայացուցիչին միջեւ:

Մայիս ամսուան մէջ, յատուկ հրաւեր ստանալով Կիպրոսի Կառավարութենէն, Յուլիս 5-7 ընկերակցեցայ Նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիասին, Զայաստան իր կատարած պետական մակարդակի այցելութեան առիթով: Այցին մանրամասնութիւններուն պիտի տեղեկանաք «Լրատու»ի յաջորդ թիւով:

Նախապես, մի քանի առիթներով յայտնած էի, թե պատրաստութեան մէջ է Հայ Ժողովուրդի եւ Կիպրահայութեան պատմութեան գրքոյկը, Կիպրական Վարժարան յաճախող աշակերտներուն ծանօթացնելու մեր պատմութիւնը, մշակոյթը եւ կրօնը, որոնք շատ քիչ կամ գրեթէ անտեղեակ են մեր մասին: Ուրախութեամբ կը տեղեկացնեմ, թէ աշխատանքը՝ որ սիրայօժար կերպով յանձն առած էր Նարեկ Վարժարաններու Նախկին տնօրէն Պրն. Վարդան Թաշճեան, իր լրումին հասաւ Յունիս ամուլայ մէջ եւ պատրաստութիւնը յանձնուեցաւ Կրթական Նախարարութեան:

Շարունակելով Երեսփոխանական Գրասենեակի Հայաստան-Կիպրոս աւանդութիւն դարձած համագործակցութեան աշխատանքները մշակութային ծիրէն ներս եւ ի մտի ունենալով, որ 2009ը Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140ամեակն է, այս տարուայ Հոկտեմբեր 31ին, Հայաստանէն հրաւիրած ենք անուանի «Կոմիտաս» Զառեակը, ելոյթ ունենալու Նիկոսիոյ Pallas հանդիսասրահէն ներս: Մանրամասնութիւնները պիտի հաղորդենք «Լրատու»ի յաջորդ թիւով:

Հաճոյքն ունիմ տեղեկացնելու, թէ ընդառաջելով կարգ մը Կիպրացիներու դիմումներուն, Կրթական եւ Մշակութային Նախարարութիւնը 2009-2010 տարեշրջանին համար, Չափահասներու Կրթութեան (ΕΠΙΜΟΡΦΩΤΙΚΑ) Օտար Լեզուներու դասաւանդութիւններու ծիրէն ներս, ընդգրկած է Հայերէն Լեզուի ուսուցումը: Յաւելեալ ու մանրամասն տեղեկութիւններու համար կարդալ ներփակուած յայտարարութիւնը:

Գալով Արուեստի Հայկական Դպրոցի պարարուեստի բաժանմունքին, գոհացուցիչ ձեւով բոլորեց իր առաջին տարին եւ դպրոցական Նոր տարեշրջանէն սկսեալ, դարձեալ պիտի սկսին կանոնաւոր դասընթացքները:

Խօսքիս վերջաւորութեան, Ձեր բոլորին կը մաղթեմ հանդարտ ու կազդուրիչ ամառնային արձակուրդ:

**Վարդգէս Մահտեսեան**  
**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Աւելորդ կը նկատենք իւրաքանչիւր թիւին մէջ յիշելու այս առնչութեամբ կատարուած այն հսկայական գործը, որ սիրայօժար ու անվճար կերպով կը կատարուի մեր գրասենեակին կողմէ, գոհացում տալով մեր հայրենակիցներու օրինաւոր կեցութեան եւ աշխատանքի արտօնագիրներ ապահովելու, ինչպէս նաեւ Քաղաքացիութեան դիմում ներկայացնողներուն՝ պէտք եղած օժանդակութիւնը տրամադրելով:

Յետեւաբար, շատ պիտի խնդրէիք բոլորէն, որոնք օգտուեցան եւ կամ տակաւին պիտի օգտուին այս գրասենեակի ծառայութենէն, երախտագիտութեան եւ հասկացողութեան գիտակցութիւնը ունենալու, փոխանակ առիթներով անվայել արտայայտութիւններ ունենալու, համեստ գտնուին դատելու եւ ընդունելու, որ մեր ժամանակին մեծ մասը կը տրամադրենք օգտակար դառնալով Լիբանանահային, Սուրիահային, Պարսկահային, Յայաստանէն, Ռուսիայէն եւ Վրաստանէն եկած հայերուն, որոնց մեծամասնութիւնը Կիպրոս կեցութեան ժամանակամիջոցին, անօրինականութեան սահմանները անցած է: Ըստ հանգամանքին ու պաշտօնին, այս գրասենեակը ստեղծուած է գոհացում տալու Կիպրահայ գաղութի ու համայնքի անդամներու կարիքներուն, սակայն առանց խտրութեան եւ Սփիւռքի միակ Յայ ներկայացուցիչ գրասենեակը ըլլալով, կը ծառայէ աշխարհասփիւռ եղած հայ անհատներու տեսակաւոր կարիքներուն:

### **Հպատակություն**

Ապրիլին Յունիս 2009 ամիսներու ընթացքին, Նիկոսիա բնակություն հաստատած երկու ընտանիքներ, ինչպես նաեւ անչափահաս մը՝ Կիպրական հպատակություն ստացան:

### **Հարցազրոյց**

Լիբանանի «Ծաղիկ» գրական շաբաթաթերթի, Հայկական Յեղասպանութեան 94րդ ամեակին նուիրուած բացառիկ թիւին առիթով, շաբաթաթերթի արտօսատեր եւ խմբագիր Պրն. Յակոբ Տիւնեայեան հարցազրոյց մը ունեցաւ Պրն. Մահտեսեանին հետ: Հարցազրոյցը արտատպեց նաեւ «Արձագանգ» ամսաթերթը, իր Ապրիլ 2009 թիւով:

### **«Հայաստան» Համահայկական Հիմնադրամ**

Կիպրոսէն ներս «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աշխատանքները վերաշխուժացնելու նպատակով, Ապրիլ 4-5 Կիպրոս այցելեցին Հիմնադրամի գործադիր տնօրէն Պրն. Արա Վարդանեան, Հիմնադրամի արտաքին կապերու պատասխանատու Պրն. Հրաչ Յովհաննիսեան, ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ եւ լիազօր դեսպան Ն.Վ. Վահրամ Կաժոյեան եւ դեսպանութեան առաջին քարտուղար Պրն. Սերոբ Պէճանեան: Ապրիլ 5ին հաւաք մը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահէն ներս, կազմակերպութեամբ Ազգային Իշխանութեան եւ հովանաւորութեամբ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչին: Հաւաքի ընթացքին Հիմնադրամի գործադիր տնօրէնը ներկայացուց Հիմնադրամի ծրագիրներն ու ցարդ կատարուած աշխատանքները, որմէ ետք տեղի ունեցաւ գաղափարներու փոխանակում, իսկ Պրն. Մահ-

տեսեան խօսք անելով շեշտը դրաւ Դեսպանութեան, Ազգային Իշխանութեան եւ Պետական Ներկայացուցիչի սերտ համագործակցութեան կարեւորութեան վրայ, որպէսզի կարելի ըլլայ առաւելագոյն չափով օգնել եւ նիւթապէս օժանդակել Հայրենիքի զարգացման եւ բարօրութեան նպատակին համար ստեղծուած Հիմնադրամի աշխատանքներուն: Այս առթիւ, Պրն. Մահտեսեան գործնական քայլի անցնելով եւ քաջալերելով ներկաները իրենց մասնակցութիւնը բերելու, բացումը կատարեց նուիրելով համեստ գումար մը: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի մամլոյ հաղորդագրութենէն վերջերս իմացանք, թէ սոյն գումարով, արդէն իսկ բարեկարգուած է Տաւուշի մարզի Ակնաղբիւր գիւղի դպրոցի մարզական հրապարակը:

### Ապրիլեան Եղեռնի 94-րդ ամեակի ոգեկոչում

Շաբաթ, 25 Ապրիլ 2009ին, «Փասիտ»ի սրահին մէջ տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի 94-րդ ամեակի ոգեկոչման հանդիսութիւնը, կազմակերպութեամբ Հայկական Յեղասպանութեան Կիպրոսի Ոգեկոչման յանձնախումբին եւ մասնակցութեամբ աւելի քան 400 ներկաներու ու մեծաթիւ պետական պաշտօնական մակարդակի հրաւիրեալներու: Բացման խօսքով հանդէս եկաւ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը, որ ընդօժեց Հայ եւ Յոյն Կիպրացիներու միաց-



եալ պայքարը՝ ի նպաստ իրենց խնդրի իրաւունքներու տիրացման: Օրուայ բանախօսն էր Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Պրն. Մարիոս Կարոյեան, որ շեշտը դրաւ Հայկական Ցեղասպանութեան միջազգային գետի վրայ ճանաչման կարելորութեան: Ան շնորհաւորեց Պրն. Մահտեսեանը, որպէս Ոգեկոչման Յանձնախումբի ատենապետ, որ լաւապէս կազմակերպած էր ոգեկոչման ձեռնարկը:

Հինգշաբթի, 30 Ապրիլ 2009ին, Պետական Ներկայացուցիչը Խորհրդարանի նիստին խօսք անելով, անգամ մը եւս յիշեցուց, թէ Հայկական Ցեղասպանութեան գծով Թուրքիոյ անպատիժ մնալը, վնաս է համայն մարդկութեան եւ եթէ Թուրքիա քաջութիւնը չունենայ ընդունելու իր արարքը, պիտի չկարենայ մաքուր ապագայ մը կերտել իր ժողովուրդին համար:

Ինչպէս տեղեակ էք, Ցեղասպանութեան ոգեկոչման թուականներուն նախօրեակին, 22 Ապրիլ 2009ին, յայտարարուեցաւ Հայաստանի եւ Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարներուն «Ճամբու Քարտէս»ի մը համաձայնութեան յայտարարութիւնը: Այս լուրը անորոշութեան ալիք մը ստեղծեց Կիպրոսի լրատուական աղբիւրներուն մօտ, որոնցմէ տեղին է յիշել «Sigma» հեռատեսիլի կայանը, որ իր գիշերուայ կեդրոնական լուրերու բաժնէն, հարցազրոյց մը ունեցաւ Պրն. Մահտեսեանին հետ լուսաբանութիւններ խնդրելով, հարցազրոյց ունեցաւ նաեւ Պետական Ռատիօկայանի (PIK) առաջին ալիքը:

### **Ցաւակցագիր**

Երեքշաբթի, 7 Ապրիլ 2009 թուակիր նամակով մը, Հայ Պետական Ներկայացուցիչը ցաւակցագիր մը յղեց Իտալիոյ Դեսպան Ն.Վ. Լուիճի Նաբոլիթանոյի, յայտնելով իր եւ Կիպրահայ գաղութին վշտակցութիւնները, Լա-

քուիլայի մեջ տեղի ունեցած ահաւոր երկրաշարժի դժբախտ եղելութեան առիթով:

### **Յանդիպում՝ ՄԱԿ-ի յատուկ խորհրդականին հետ**



*Ալեքսանտր Տաունըրի հետ*

Ուրբաթ, 10 Ապրիլ 2009ին, Պրն. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղարի Կիպրոսի հարցով յատուկ խորհրդական Պրն. Ալեքսանտր Տաունըրի հետ: Պրն. Տաունըր լուսաբանութիւններ տուաւ Կիպրոսի հարցին գծով վերջին իրադարձութիւններուն եւ տարուած աշխատանքներուն մասին, իսկ իր կարգին Պրն. Ներկայացուցիչը անոր փոխանցեց Կիպրահայ Յամայնքին ներկայ կարգավիճակին ու դրութեան մասին:



## Մակարավանք ուխտագնացութիւն



Կիրակի, 10 Մայիս 2009ին, միացեալ կազմակերպութեամբ Պետական Ներկայացուցիչի գրասենեակին եւ Ազգային Առաջնորդարանին, տեղի ունեցաւ Մակարավանք երկրորդ ուխտագնացութիւնը, Կիպրոսի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան վերահսկողութեամբ: Այս տարի շուրջ 200 հոգի մասնակցեցաւ ուխտագնացութեան, որոնց մէջ կային Լիբանանէն եւ Անգլիայէն հիւրեր, ինչպէս նաեւ անձնական փափաքով մեզի ընկերակցող՝ Շուէտի դեսպան Ն.Վ. Ինկըմար Լինտաիլը:

Անխնամ վանքի, քարուքանդ մատուռի այլակերպուած խորանին շուրջ բոլորուած, ուխտագնացները սքեմաւոր կղերականներու՝ Վարուժան Արքեպիսկոպո-

սի եւ Քահանայ Յայրերու առաջնորդութեամբ, խունկ ու մոմով եւ թրթռացող ձայնով երգեցին «Յայր Մեր»ը, «Տեր Ողորմեա՛»ն ու «Կիլիկիա»ն: Պահը չափազանց խորհրդաւոր էր ու շատեր արցունքոտ աչքերով դուրս եկան մատուռէն:

Նոյն օրը երեկոյեան, Երեսփոխանական Գրասենեակին կողմէ մամլոյ հաղորդագրութիւն մը յղուեցաւ բոլոր տեղական թերթերուն եւ հեռատեսիլի կայաններուն, որուն մէջ լայնօրէն արձանագրուած էր վանքին աշխարհագրական դիրքին եւ մշակութային արժէքները ներկայացնող պատմականը: Մամուլը լայնօրէն անդրադարձաւ այս ուխտագնացութեան, Նոյնիսկ բռնագրաւեալ լրատուական աղբիւրներ, նշումներ կատարեցին այս մասին:

Ինչպէս յառաջաբանին մէջ նշած էինք, Շուետի դեսպանին թելադրանքով, վանքի անցեալի եւ ներկայ իրավիճակին լուսանկարներու ճոխ թղթածրարը յանձնուեցաւ երկու համայնքներու ներկայացուցիչներէ բաղկացած Արիեստագիտական Յանձնաժողովին:

### **Նարեկ Յայկական Վարժարաններ**

Նարեկ Յայկական Վարժարաններու Յոգաբարձութիւնը, որ կ'աւարտէ իր հնգամեայ տարեշրջանը Նոյեմբեր 2009ին, 6 Ապրիլ 2009ը թուականին գումարած նիստի ընթացքին, մեծամասնութեամբ որոշեց Նոր տնօրէնի պաշտօնին կոչել Տիկ. Վերա Թահմազեանը, նկատի ունենալով, որ անոր վկայականներն ու տուեալները, կը համապատասխանեն թերթերու մէջ պաշտօնապէս լոյս տեսած յայտարարութեան պայմաններուն:

Դժբախտաբար, վերոյիշեալ որոշումը անընդունելի նկատուեցաւ Յոգաբարձութեան ատենապետին կողմէ, որ գրաւոր ձեւով իր անհամաձայնութիւնը փոխանցեց

Կրթական Նախարարութեան:

Ստեղծուած կացութեան հետեւանքով, Կրթական Նախարարութիւնը փափաքեցաւ տեսակցութիւն մը ունենալ Պետական Ներկայացուցիչին հետ, որ հարցը քննելէ ետք, 11 Յունիս 2009 թուակիր նամակով եկաւ հաստատելու Հոգաբարձական կազմին որոշումը:

Չմարսելով Կրթական Նախարարութեան պատասխան նամակին վաւերականութիւնը, Nareg friends անունին ետին պահուրտած խմբակ մը, քայլ մը առաջ երթալով, ցեխարձակումներ կատարեց «ԱΛΗΘΕΙΑ» թերթին միջոցով Պետական Ներկայացուցիչին հասցէին եւ վաւերացուած որոշումին նկատմամբ ու յաջորդաբար իր 20 Յունիս եւ 8 Յուլիս թիւերով, տպեց ստացուած անվայել գրութիւններ, որոնք բացարձակ չէին համապատասխաներ իրականութեան:

Կը կարծենք, թէ ժամանակն է որ իւրաքանչիւր անհատ, որ իսկապէս մտահոգ է Նարեկ Հայկական Վարժարաններու ապագայով, զգաստանայ եւ փոխանակ պղտոր ջուրին մէջ ձուկ որսալու, փորձէ իր ձեռքը երկարել օգնելու Հայկական միակ ազգային դաստիարակութիւն մատուցող այս հաստատութեան վերելքին: Վերջապէս, Նարեկի յաջողութիւնն ու բարօրութիւնը մեր բոլորին հպարտութիւնն է, որ պիտի նպաստէ մեր զաւակներուն ու թոռներուն արժանավայել ուսման մակարդակի տիրացումին: Փորձենք Մելգոնեանի ճակատագրին չենթարկել զայն:

Հոգաբարձական կազմի ատենապետ Պրն. Գրիգոր Յարութիւնեան իր հրաժարականը տուած ըլլալով, Պրն. Մահտեսեան 12 Յունիս 2009 թուակիր նամակով մը, Կրթական Նախարարութեան առաջարկեց Պրն. Արամ (Սեպուհ) Դաւիթեանի թեկնածութիւնը ատենապետի պաշտօնին համար ու այլ անհատ չնշանակեց կազմէն

ներս, փոխանցելով, թե շատ մօտ ապագային, Նարեկ Հայկական Վարժարաններուն համար պիտի առաջարկուի նոր Հոգաբարձական կազմի անուանացանկ մը:

Իսկ 15 Յունիս 2009 թուակիր սամակով մը, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը իր շնորհալորութիւնները փոխանցեց նորանշանակ Տնօրէնուհի՝ Տիկ. Վերա Թահմազեանին, յուսալով, որ ան իր կարողութիւնները եւ փորձառութիւնը ի սպաս կը դնէ Նարեկ Հայկական Վարժարաններու բարեգարդման, յաջողութիւն մաղթելով անոր այս պատասխանատու առաքելութեան մէջ:

### **Պարտադիր բանակի ծառայութիւն**

Հինգշաբթի, 18 Յունիս 2009ին, Պրն. Վարդգես Մահտեսեանի նախաձեռնութեամբ եւ հրաւերով, Երեսփոխանական Գրասենեակին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցան 2009 Յուլիսին պարտադիր զինուորական ծառայութեան թեկնածու 8 հայ տղաքն ու անոնց ծնողները:

Այս հանդիպումին ներկայ էին անցեալ տարեշրջանին բանակ գացած առաջին հայ զինուոր Արէն Արմենակեանը եւ Սպայ՝ Սիմոն Մերքուրիսը, որոնք լայն գիծերու մէջ բացատրութիւններ տուին բանակի ծառայութեան կազմակերպական եւ գործնական աշխատանքներուն մասին, ինչպէս նաեւ իրենց փորձառութենէն թելադրանքներ:

Անոնց բացատրութենէն ետք, Պրն. Մահտեսեան խօսք առնելով, փոխանցեց իր կողմէ տարուած աշխատանքները բարելաւելու բանակի ծառայութեան կոչուած հայ տղոց պայմանները: Ներկաներուն յանձնուեցաւ սկիզբի ժամանակաշրջանին առնչութեամբ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ անհրաժեշտ իրերու եւ պիտոյք-

ներու ցանկ մը:

Վերջաւորութեան, առիթը տրուեցաւ ներկաներուն հարցումներ ուղղելու, որոնց համար ստացան պատշաճ պատասխաններ:

Ծնողք եւ որդիք գոհացած այս հանդիպումէն բարի տրամադրութեամբ մեկնեցան: Մեր զինուորներուն կը մաղթենք ապահով ծառայութիւն եւ բարի աւարտ:

### **Աւանդական շրջանաւարտից հիւրասիրութիւն**

Չորեքշաբթի, 24 Յունիս 2009ին, տեղի ունեցաւ շրջանաւարտից ավանդական հիւրասիրութիւնը Պետական Ներկայացուցիչին բնակարանին մէջ, ներկայութեամբ աւելի քան 60 Հայ շրջանաւարտներու: Հիւրասիրութեան ներկայ էին նաեւ Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս Յերկէլեան, Զահանայ Հայրերն ու Նարեկ Վարժարաններու ուսուցչական կազմի անդամները: Հաճելի ժամեր անցնելով, շրջանաւարտները առիթը ունեցան մօտէն զրուցելու Պրն. Մահտեսեանին հետ:

### **Երիտասարդական լողաւազանի խրախճանք (Pool Party)**

Շաբաթ, 27 Յունիս 2009ին, Նիկոսիոյ Champs Elysees Կեդրոնի լողաւազանին շուրջ տեղի ունեցաւ երիտասարդական խրախճանք մը, ուր հաւաքուած էին մօտ 70 հայ երիտասարդներ: Անոնք հաճելի պահեր անցուցին մինչեւ առտուայ կանուխ ժամերը, զրուցելով, պարելով եւ լողալով:

### **Արուեստի Հայկական Դպրոց**

Արուեստի Հայկական Դպրոցի պարարուեստի բաժանմունքը, գլխաւորութեամբ Տիկ. Արմենուհի Մխիթարեանի, գոհացուցիչ կերպով բոլորեց իր առաջին տարին:

Դասընթացքներուն մասնակցեցան հետաքրքրութիւն ցուցաբերող խումբ մը փոքրիկներ, որոնք 3 Յուլիս 2009ի երեկոյեան, Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահէն ներս ներկայացուցին առաջին տարուայ ընթացքին սորված իրենց պարերը: Այս հանդեսին ներկայ գտնուեցաւ նաեւ Պրն. Մահտեսեան, որ խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց փոքրերուն, իրենց մասնակցութեան համար եւ շնորհաւորեց Տիկին Մխիթարեանը իր տարած աշխատանքին համար:

### **Շնորհաւորական եւ շնորհակալական գիրեր**

11 Մայիս 2009 թուակիր նամակով մը ուղղուած «Արարատ» Ֆութսալի խումբի նախագահ՝ Տոքթ. Ադամեանին, Պրն. Մահտեսեան շնորհաւորեց Հ.Բ.Ը.Մ.ի «Արարատ» Ֆութսալի խումբի մարզիկներն ու մարզիչ՝ Պրն. Արա Պետրոսեանը, Կիպրոսի Ֆութսալի մրցանքի բաժակին տիրանալուն համար ու յաջողութիւն մաղթեց անոնց:

18 Մայիս 2009 թուակիր գիրով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհակալութիւն յայտնեց Պրն. Սմբատ Տէրունեանին (ՏԵՎԼԵԹԵԱՆ), վերջերս լոյս ընծայած իր «Արձագանգ ու Յօլք» բանաստեղծական ժողովածուին հրատարակութեան առիթով իրեն ուղարկած նմոյշին համար, միեւնոյն ժամանակ շնորհաւորական իր խօսքը փոխանցելով, անոր մաղթեց քաջառողջ կեանք:

27 Մայիս 2009ին Պրն. Վահէ Գուլյումճեանին յղուած նամակով մը, Պրն. Մահտեսեան գնահատեց անոր երկարատեւ ծառայութիւնը որպէս Կիպրահայ գաղութի Նոտար (մուխթար):

### **Պետական-պաշտոնական մակարդակի հանդիպումներ**

Շաբաթ, 4 Ապրիլ 2009ին, Պետական Ներկայացուցիչը Երեսփոխանական գրասենեակին մեջ ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Լիբանանի խորհրդարանի բազմամեայ երեսփոխան Տոքթ. Եղիկ ՃԵՐԵՃԵԱՆը, որ Կիպրոս կը գտնուէր որպէս դասախօս Ատանայի Կոտորածներու 100ամեակի նուիրուած ձեռնարկին առիթով:

Երկուշաբթի, 6 Ապրիլ 2009ին, Պրն. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Պաշտպանութեան Նախարար Պրն. Քոստաս Փափաքոստասին հետ, բարելաւելու պարտադիր զինուորական ծառայութիւն կատարող Հայ երիտասարդներուն պայմանները եւ անոր հետ գաղափարներ փոխանակեց կարգ մը անորոշ հարցերու կապակցութեամբ:

Նոյն օրը, Պետական Ներկայացուցիչը ներկայ զըտնուեցաւ Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանի եւ ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի լիազօր դեսպան Ն.Վ. Վահրամ Կաժոյեանի ունեցած հանդիպումին, որ ծրագրուած էր քննելու ՀՀ Խորհրդարանի Նախագահ Պրն. Յովիկ Աբրահամեանի Կիպրոս մօտալուտ այցի մանրամասնութիւնները:

Չորեքշաբթի, 6 Մայիս 2009ին, Պրն. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանատան Քաղաքական Հարցերու պատասխանատու՝ Պրն. Ճոն Րաթիկանի հետ, քննելու Եւրոպական Միութեան Խորհրդարանական Վեհաժողովէն վերջերս ստացուած տեղեկագիրի գործադրումը Կրօնական Փոքրամասնութիւններու Պահպանութեան առնչութեամբ:

Չորեքշաբթի, 27 Մայիս 2009ին, Պետական Ներկայա-

ցուցիչը մեծարանքի բարեկամական հանդիպում մը ունեցաւ Արքեպիսկոպոս Խրիստոստոմոս Բ.ի հետ:

Ուրբաթ, 29 Մայիս 2009ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Արհեստագիտական Յանձնախումբի Մշակութային Ժառանգութեանց Պահպանութեան Յոյն Կիպրացի ատենապետ՝ Տակիս Զատճիտիմիթրիուի հետ, որուն փոխանցեց Մակարավանքի ներկայ իրավիճակին լուսանկարներու մանրամասն թղթածրարը:

Հինգշաբթի, 11 Յունիս 2009ին, Պրն. Մահտեսեան գլխաւորելով Մելգոնեանի Կիպրոսի Սանուց Միութեան պատուիրակութիւնը, հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարար Պրն. Նեոքլիս Սիլիքիոտիսին հետ, Մելգոնեան Կրթական Զաստատութեան կապակցութեամբ:

### **Ձեռնարկներու Ներկայութիւն**

Չորեքշաբթի, 1 Ապրիլ 2009ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Զամագգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի «Սիփան» պարախումբի տարեկան ելոյթին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Pallas սրահէն ներս: Ձեռնարկը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը:

Ուրբաթ, 3 Ապրիլ 2009ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած Ատանայի 100ամեակի տարելիցին նուիրուած ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ:

Երեքշաբթի, 7 Ապրիլ 2009ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Կիպրոսի Զայ Դատի Յանձնախումբի կազմակերպած՝ բեմադրիչ Գարլա Կարապետեանի «Screamers» վաւերագրական ժապաւէնի



ցուցադրութեան, K-Cineplex շարժապատկերի սրահէն ներս:

Չորեքշաբթի, 15 Ապրիլ 2009ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Ազգային Առաջնորդարանի կազմակերպած Կոմիտասեան համերգին, Նիկոսիոյ Kasteliotissa սրահին մէջ:

Կիրակի, 3 Մայիս 2009ին, Տէր եւ Տիկին Մահտեսեան ներկայ գտնուեցան Զամազգայինի «Օշական» մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի տարեկան ներկայացումին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Pasidy սրահէն ներս: Այս ներկայացումը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը:

Շաբաթ, 30 Մայիս 2009ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան ԶՅԴ եւ քոյր միութիւններու կազմակերպած Մայիս 28ի տօնակատարութեան, որ տեղի ունեցաւ Pasidy սրահին մէջ, Պրն. Մահտեսեանի բարձր հովանաւորութեամբ:

Չորեքշաբթի, 17 Յունիս 2009ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Նարեկ Զայկական Վարժարաններու ամառային հանդեսին: Զանդեսը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը: Սրբազան Զօր հետ միասնաբար, անոնք վկայականները բաշխեցին շնորհաւորելով ծնողներն ու աշակերտները:



## Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետության Օրենքներուն

### Հայրենադարձներու Օժանդակութիւն (Repatriates – Επαναπατρισθέντες)

Այն Կիպրահպատակները, որոնք աւելի քան տասը (10) տարիներ լքած ուլալով հրենց հայրենիքը (թրքական ներխուժումներէն ետք եւ կամ գործի պարտաւորութեանց պատճառով), ապրած ու աշխատած են օտար երկիրներ, Կիպրոս վերահաստատուելու պարագային կը համարուին հայրենադարձներ (Repatriates – Επαναπατρισθέντες):

Հայրենադարձները կրնան օգտուիլ հետեւեալ նպաստներէն.

◆ **1 (մէկ) տուրքէ գերծ (Duty Free) ինքնաշարժ** մինչեւ 9 հոգիւնց (Կիպրոսի մէջ նորը գնած վերահաստատուելէն մինչեւ մէկ տարի ետք կամ հետը բերած բայց ոչ 5 տարիէ աւել հին): Այն պարագային, երբ ինքնաշարժը Եւրոպական Միութեան երկիրներէն չէ, կանոնաւոր տուրք կը վճարուի: Մանրամասնութիւններու համար հեռաձայնել 22-601660 / 661/ 662

◆ **Տան վարձքի օժանդակութիւն առաջին տարուան**

**համար՝** €114 ամիսը մեկ կամ երկու հոգիի համար, €138 ամիսը երեք հոգիից ընտանիքի համար, €162 ամիսը չորս կամ հինգ հոգիից ընտանիքի համար, €185 ամիսը վեց հոգիից եւ ավելի ընտանիքի համար: Մանրամասնություններու համար հեռաձայնել 22-871837/8

◆ **Կրթաթոշակի յատկացում** €769 (տարեկան) երբ յաճախեն անձնական երկրորդական դպրոցներ: Ամեն տարի այս յատկացումը կը տրուի միայն առաջին 150 դիմում կատարող աշակերտներու: Մանրամասնություններու համար հեռաձայնել 22-800600 / 22-800704

◆ **Իւրաքանչիւր ամուրի գաւակի տարեկան յատկացում (Επίδομα Τέκνου)** մինչեւ 23 կամ 25 տարեկան: Տարիքն ու գումարը կը ճշդուին ըստ ընտանիքի եկամուտին եւ գաւակներուն ուսման կամ բանակի ծառայութեան ժամանակաշրջանին: Մանրամասնություններու համար հեռաձայնել 22-804070

Վերոյիշեալ պայմաններէն օգտուելու համար, Կիպրոսի պատկան մարմիններուն պարտին ներկայացնել օտար երկիրներ երկար տարիներ ապրած ըլլալու փաստաթուղթեր (օրինակ՝ գործի համաձայնագիր, տան կահկարասիի եւ գործածուած ինքնաշարժի ներածման մաքսատան փաստաթուղթեր ելլն.):

Յաւելեալ տեղեկություններու համար այցելել Արտաքին Գործոց Նախարարութեան [www.mfa.gov.cy](http://www.mfa.gov.cy) կայքէջը:

Ամառուայ արձակուրդին առիթով,  
Երեսփոխանական Գրասենեակը փակ պիտի ըլլայ  
Երկուշաբթի, 10 Օգոստոս 2009-էն մինչեւ  
Կիրակի 23 Օգոստոս 2009:

## ԿԻՊՐԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
Ել. Յացէ office@armenianmp.com  
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
Ել. Յացէ vmahdessian@parliament.cy